

Տոնական միջոցառում նվիրված Առաջին Հանրապետության ստեղծման տարեդարձին

28.05.2015

Մայիսի 28-ին Գեղարքունիքի մարզի Գավառ, Ճամբարակ և Վարդենիս քաղաքային համայնքներում տեղի ունեցան տոնական միջոցառումներ՝ նվիրված Առաջին Հանրապետության ստեղծման 97-րդ տարեդարձին: Ծրագիրն իրականացվեց Պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի և Գեղարքունիքի մարզպետարանի և Գավառի պետական համալսարանի համատեղ ուժերով: Վաղ առավոտից մարդաշատ էր մարզկենտրոն Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակը: 2-րդ բանակային կորպուսի ենթակա զորամասերը հրապարակում բացազատել էին ուսումնական կետեր, որտեղ ցուցադրվեցին Հայկական բանակի արդի սպառազինության որոշ տեսակներ: Զինվորականները մանրամասնորեն այցելուներին ծանոթացնում էին ցուցադրվող զինատեսակների գործածությանը եւ նշանակությանը, պատասխանում հետաքրքրող հարցերի: Զենք-զինամթերքի ցուցադրությունը մեծ հետաքրքրություն էր առաջացնում հատկապես զորակոչային և նախազորակոչային տարիքի երիտասարդների ու դպրոցահասակների շրջանում: Պաշտպանության նախարարության աջակցությամբ մարզի տարածքներում իրականացված այս նախաձեռնությունը, բացի տոնական շունչ հաղորդելուց, ունի նաև ուսուցողական մեծ նշանակություն, տոնի առթիվ շնորհավորելով ներկաներին, ասաց մարզի ղեկավարը: ,, Միշտ չէ, որ հնարավոր է լինում բարձր դասարանների տղաներին ճանաչողական նպատակով զորամասեր տանել: ՀՀ Պաշտպանության նախարարության աջակցությամբ այսօր մենք հնարավորություն ենք ունեցել մարզկենտրոն տեղափոխել որոշ զինատեսակներ: Սա լավագույն առիթներից մեկն է, որպեսզի նախազորակոչային տարքի տղաները տեսնեն, թե իրենց եղբայրները, հարազատներն ու ընկերները ծառայության ընթացքում ինչ տեխնիկայի հետ են առնչվում կամ ինչ են օգտագործում նրանք՝ հայրենի երկրի սահմանները պաշտպանելիս,, - իր խսքում նշեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Տոնակատարության ընթացքում ցուցադրական մարտով հանդես եկան 2-րդ բանակային կորպուսի առանձին հետախուզական գումարտակի զինվորները, ԵԿՄ Գավառի տարածքային բաժանմունքի պատանի երկրապահները: Միջոցառման մասնակիցները տոնակատարության ընթացքում հնարավորություն ունեցան օգտվելու նաև զինվորական դաշտային խոհանոցից: Մայիսյան հաղթանակները եզրափակող տոնի առթիվ միմյանց էին շնորհավորում պաշտոնատար անձինք, երկրապահներ, արցախյան ազատամարտի վետերաններ, անհատ քաղաքացիներ: Հայրենաշունչ երգերով, հաղթական պարերով, Հայոց Պետականության հիմանդրման պատմությունը ներկայացնող փաստերով հանդես եկան Գավառ քաղաքի արվեստի և երաժշտական դպրոցների սաները:

